ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 16 >> 07 2013թ. N: 66 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՅՈՒՐԻԿ ՂԱԶՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածներով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժ>> կետի դրույթներով և հիմք ընդունելով Յուրիկ Ղազոյանի 2013 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Յուրիկ Ղազոյանին տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2013 թվականի հուլիսի 25-ից:
2. Ամենամյա արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր՝ 2013 թվականի հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ:
3. Ամենամյա արձակուրդի ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել փոխտնօրեն Տիրուհի Քարտաշյանին:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝